ԱԺ

ԸՆԴԴԵՄ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՌԱԶՄԱՏԵՆՉ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջիկա օրերին ԱԺ պատվիրակությունը մեկնելու է ԼՂՀ՝ քննարկելու ԼՂՀ խնդրին առնչվող իրավիճակը: ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ, ԱՄՆ պետքարտուղարի տեղակալի օգնական Մեթյու Բրայզան հայտարարեց, թե «որոշակի պահի Ստեփանակերտը կարող է միանալ ԼՂ հակամարտության կարգավորման բանակցություններին»: Ճիշտ է, Բրայզան առայժմ հարկ է համարել ասել, թե այսօր բանակցությունների ձեւաչափի փոփոխման մասին չարժե խոսել, բայց, այնուհանդերձ, այս ազդակն անհետեւանք մնալ չէր կարող:

Ինչ կքննարկեն մերոնք ԼՂՀ-ում: Կարելի է դատել նաեւ երեկ ԱԺ-ում քննարկված հայտարարության նախագծից, որի հեղինակը ԱԺ նախագահ Տիգրան Թորոսյանն է: Ըստ փաստաթղթի, Ազգային ժողովը ՀՀ նախագահին եւ կառավարությանն առաջարկում է «ակտիվացնել եւ ընդլայնել ԼՂՀ խնդրի վերաբերյալ միջազգային հանրությանը լիարժեք տեղեկացնելուն ուղղված միջոցառումների մշակման եւ իրականացման ջանքերն ու հնարավորությունները», «ԼՂՀ խնդրի կարգավորմանն ուղղված հայաստանյան քաղաքականությանը հաղորդել ավելի նախաձեռնողական բնույթ» եւ «միջազգային իրավունքի շրջանակներում ձեւակերպել այն իրավական հիմքերը, որոնք Ադրբեջանի կողմից ռազմական ագրեսիայի կամ այլ բռնի միջոցների կիրառման դեպքում ՀՀ-ին հնարավորություն կտան ապահովել ԼՂՀ լիարժեք անվտանգությունն ու պաշտպանությունը»: Առաջարկը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Մասնավորապես, ըստ նախագծի, նման առաջարկ ներկայացնելու հիմնավորումների թվում է Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաների շարունակական ռազմատենչ, հայատյաց քարոզչությունը: Բացի այդ՝ Ադրբեջանի կողմից հրադադարի խախտման սադրիչ գործողությունները, մասնավորապես, մարտի 4-ին ադրբեջանական զինուժի ներխուժումը ԼՂՀ տարածք:

Նախագծի քննարկմանը ԱԺ սակավամարդ դահլիճից հնչեցին մի քանի հարցեր: ՀՅԴ խմբակցությունը կոչ արեց խստացնել հայտարարության ոգին: Խմբակցության ղեկավար Հրայր Կարապետյանը հայտարարեց. «Մյուս երկրների խորհրդարանները նման հարցերի վերաբերյալ առավել արմատական կեցվածք են դրսեւորում, քան դիվանագետները: Եւ, կարծում եմ, մենք չպետք է բացառություն լինենք»: Հրայր Կարապետյանը մասնավորապես առաջարկեց ընդունել ՀՅԴ առաջարկը, ըստ որի՝ «ռազմական կիրառումը բացառելու համար Ադրբեջանի հետ կնքել ուժի կիրառման սպառնալիքից փոխադարձաբար հրաժարվելու վերաբերյալ համապատասխան պայմանագիր: Եթե չեն ընդունում մեր հարեւանները, սա մեզ համար լավագույն միջոց է, որպեսզի վաղը մենք ասենք, որ մենք առաջարկել ենք, նրանք հրաժարվել են: Եթե կընդունեն՝ ավելի լավ»: Այս կապակցությամբ Տիգրան Թորոսյանն արտահայտեց իր անհամաձայնությունը. «Եթե մենք ինչ-որ բանում պիտի Ադրբեջանին մեղադրենք, կարող ենք հենց այսօր էլ մեղադրել, որովհետեւ նա իսկապես խախտում է բազմաթիվ փաստաթղթեր, որոնց նա միացել է: Սկսած ՄԱԿ-ի կանոնադրությունից, կարելի է շարքը երկար թվարկել: Կարծում եմ, մի քիչ արհեստականություն կա այդ առաջարկի մեջ»: Վահան Հովհաննիսյանի գնահատմամբ, «մեր քաղաքականությունը անատամ է: Այն օրը, երբ Ադրբեջանը սկսեց ջախջախել Ջուղայի խաչքարերը, մենք պետք է հրաժարվեինք ԵԱՀԿ Մինսկի խմբի հետ բանակցելուց»: Հնչեց նաեւ առաջարկ, թե անհրաժեշտ է ակտիվացնել միջազգային ատյաններում ԼՂ խնդրի լուծմանն ուղղված գործունեությունը: ԲՀԿ խմբակցության անդամ Նաիրա Զոհրաբյանը, սակայն, դժգոհեց, թե արտերկիր գործուղվող իր շատ ու շատ գործընկերները, ԼՂ խնդրի կարգավորման առնչությամբ հանդես գալու փոխարեն, շատ հաճախ զբաղվում են «շոպինգով»:



Իսկ ինչո՞վ են զբաղվում պետական այրերը Հայաստանում: Քաղաքական հետապնդումներով՝ Անահիտ Բախշյանը «Ժառանգություն» խմբակցության անունից ցավով արձանագրեց. «Մեր պետության եւ պետականության համար այս կարեւոր հարցը քննարկում ենք այն ժամանակ, երբ Արցախի ինքնորոշմանն ու ազատագրմանը մասնակցած մի քանի տասնյակ ազատամարտիկներ այսօր բանտերում են, որոնց թվում նաեւ մեր գործընկեր ազատամարտիկ պատգամավորներն են»: Տիգրան Թորոսյանն ասաց, թե «գլուխ է խոնարհում ցանկացած մարդու առջեւ, որը մասնակցել է Ղարաբաղյան պատերազմին: Սակայն տարբեր հարցեր չպետք է իրար հետ կապել: Մարդիկ, որոնք անմեղ են, դա կապացուցվի: Մարդիկ, որոնք մեղավոր են՝ նույնպես կապացուցվի, եւ կպատժվեն: Անկախ այն հանգամանքից, թե ԼՂ պատերազմին մասնակցե՞լ են, թե՞ ոչ»:

ԱԺ հայտարարության նախագծի կապակցությամբ խմբակցություններն իրենց դիրքորոշումները կարտահայտեն հաջորդ նիստում:

«ԼՂՀ խնդրի կարգավորմանն ուղղված հայաստանյան քաղաքականությանը հաղորդել ավելի նախաձեռնողական բնույթ»

Անուշ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
anush@hraparak.am